ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հունվարի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/01»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 25.01.2025թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 27.01.2025թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի գործընկեր , խնդրում եմ մի քանի հարցի պարզաբանում տրամադրել 1. Ի՞նչ նկատի ունեք հիմնական չափսերը 330*440 մմ ասելով , տպագրություն կատարելիս տպագրվող նյութի հստակ չափսը շատ կարևոր է ուստի խնդրում ենք նշել հստակ չափ ամբողջ քանկաի համար կամ հստակեցնել որ քանակը ինչ չափ է ունենալու 2. նշել եք որ առավելագույն քանակը 131450 հատ և 60 տարբեր տեսակ , խնդրում ենք նշել թե այդ 60 տեսակները ինչ քանակներով են բաշխվելու և ամեն տեսակից քանի հատ ենք տպագրելու քանկի որ տպագրության արժեքի համար դա ևս կարևոր ինֆորմացիա է 3. խնդրում ենք նաև հստակեցնել համարակալման և ծալքի մասին ինֆորմացիան որպեսզի մենք կարողանանք ճիշտ հաշվարկ կատարել 4. առավելագույն քանակը 131450 հատ է նշված իսկ նվազագույն քանակն ինչքան կարող է լինել ամեն տեսակի համար , եթե մոտավոր քանակ չունենանք ապա տրամադրած արժեքը կլինի կամ ի վնաս տպագրողի կամ շատ ուրճացված և ոչ մրցակցային ԿԱՆԽԱՎ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ»

<u>Պարզաբանում</u>

«1-ին կետով բարձրացված հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնման առարկա հանդիսացող տպագրական և առաքման ծառայությունների տեխնիկական բնութագրերում նշված՝ «Ձևաթղթերի հիմնական չափսերը՝ 330x440 մմ» հատկանիշը վերաբերում է տպագրվող ձևաթղթերի լայնությանը և երկարությանը, այսինքն՝ բոլոր տպագրվող ձևաթղթերը (ամբողջ քանակը) պետք է ունենան 300 մմ լայնություն և 440 մմ երկարություն:

3-րդ կետով բարձրացված հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ Ընթացակարգի գնման առարկա հանդիսացող տպագրական և առաքման ծառայությունների տեխնիկական բնութագրերով հստակ սահմանված է բոլոր տպագրվող ձևաթղթերի համար ծալքուղու (биговка) բացման պահանջ, իսկ համարակալումը՝ ըստ անհրաժեշտության:

2-րդ և 4-րդ կետերով բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրով սահմանված է ձևաթղթերի առավելագույն քանակը՝ 131450 (մեկ հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր հիսուն) հատ, ինչպես նաև, որ նշված տեսակի ձևաթղթի տպագրությունը ենթադրում է տեքստային բովանդակության 60 տարբեր տեքստեր:

Միաժամանակ հիշյալ տեխնիկական բնութագրի պահանջների համաձայն՝ ձևաթղթերի յուրաքանչյուր խմբաքանակի տպագրության պատվերը ձևավորվում է Պատվիրատուի համապատասխան հայտի հիման վրա, որի հետ միաժամանակ Կատարողին պետք է ներկայացվի նաև տպագրվելիք ձևաթղթերի նմուշներն ու տպագրման ենթակա քանակների վերաբերյալ տեղեկություն՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ձևաթղթերի տպագրման ենթակա քանակների և տեքստերի բովանդակության վերաբերյալ հստակ տեղեկատվությունը ձևավորվում է Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի և առանձնացված ստորաբաժանումների կարիքներին համապատասխան, վերջիններիս կողմից ներկայացվող պահանջի հիման վրա, որը հիշյալ հայտի հետ տրամադրվում է ծառայությունները մատուցողին (Կատարողին):»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/01» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: